19.01.2023թ. **ք. Վանաձոր**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի նիստի

Մասնակցում էին՝

Աննա Գասպարյան - Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Վալերի Ջաղինյան- Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ

Իրինա Մարտիրոսյան- Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Արփինե Մատինյան - Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Արուս Թումանյան- Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Գևորգ Քոթանջյան - «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ փոխնախագահ

Սյուզան Հովսեփյան - «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, դրամաշնորհների ղեկավար

Քրիստինե Հովսեփյան - «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի գործադիր տնօրեն

Նարինե Ղազարյան - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ

Լիպարիտ Դալլաքյան- ՈՄԱ Վանաձոր

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Աշխատանքային խմբի կազմի փոփոխության հարց՝ կանոնակարգի համաձայն:

(զեկ. Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան)

2. Տեղեկատվության փոխանցում սոցիալական պաշտպանության բնագավառում 2022 իրականացված և 2023թ. իրականացվելիք բարեփոխումների վերաբերյալ:

(զեկ. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական բաժնի պետ Վալերի Ջաղինյան)

3. Մեխանիզմի/հարթակի ստեղծման հարցի քննարկում,որը կարող է ապահովել մարզի քաղհասարակության և համայնքների միջև (ՀԿ և ՏԻՄ) համընդհանուր, միասնական կապը՝ արդյունավետ համագործակցության և արագ արձագանքման համար:

(զեկ. ՀԿ կենտրոն ներկայացուցիչ Սյուզան Հովսեփյան)

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Օրակարգում ընդգրկված հարցերը հանգամանորեն քննարկվեցին նիստի ընթացքում:

ՈՐՈՇՎԵՑ

1.Քվեարկությամբ՝ միաձայն, որոշվեց դադարեցնել աշխատանքային խմբի անդամներ Օլեգ Դուլգարյանի, Վարդուհի Անանյանի, Լիլիթ Սինդոյանի և Քրիստինե Հովսեփյանի անդամակցությունները խմբին: Նրանց, կատարված քվերակության արդյունքում, միաձայն որոշմամբ, կփոխարինեն «Օրրան» ԲՀԿ Վանաձոր մասնաճյուղի ներկայացուցիչ Հասմիկ Ջինանյանը, «Սպիտակի հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչ Աշխեն Բաբայանը,

«ՀԵԲԱ» ՀԿ ներկայացուցիչ Մարիաննա Պեպանյանը և «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ նախագահ Էմիլիա Մարտիրոսյանը:

2. Ստեղծել համընդհանուր տվյալների բազա, որը կտրամադրվի ՀԿ սեկտորին և ՏԻՄ-երին՝ հետագա երկուստեք համագործակցությունը առավել ակտիվացնելու նպատակով:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ Աննա Գասպարյան